

ժինը. անոր ճողում նկարագրութիւնը մասամբ մը մեզի համար-
ձակութիւն կու տայ: Ասկէց զատ, ինչ որ ալ ըլլան մեր դժ-
ուարութիւնները, լաւ պիտի չհասկցուի թէ ի՛նչ կրնայ ըլլալ
Պ. Երթթիի կողմէն փութաջան խնամքներով քիչ յառաջ յար-
դարուած մատուռը, եթէ ան Եւթիմիոսի վանքին մեռելամա-
տուռը չէ: Մաղթենք որ աւելի կատարեալ հետազոտութիւն
մը՝ հասկնալի դարձնելով մեզի ընդհանուր կարգը վանքին՝ որ
տակաւին քառասական է՝ ասկէ յետոյ լոյս սփռէ դեռ մուլթ
մնացած կէտերու վրայ»:

4. Հայերը Եւթիմիոսի վանքին մէջ.

Եւթիմիոսի համբաւը հետդհետէ տարածուեցաւ Երուսաղէմի
Անապատին մէջ և շրջակաները, ինչպէս գրեցինք. անոր անու-
նը հմայք մը եղաւ և բազմաթիւ աշակերտներ սկսան գիմել
դէպի Սահէլ. մասնաւորապէս բարձր դասակարգէ երիտասարդ-
ներ՝ հոգեւոր կեանքի եւ կրօնական ուսման փափաքողներ կը
գիմէին անոր. Կապաղովկիայէն և Արարիոյ խորերէն եկող աշա-
կերտները Մեծ Անապատականին լուրջ կրթութեան շնորհիւ տի-
րացան բարձր դիրքերու, ոմանք բազմեցան Երուսաղէմի ու
Անտիոքի պատրիարքական աթոռները, այլք Պաղեստինի եպիս-
կոպոսութիւններուն զարդերը եղան. Ս. Երկրի քրիստոնէու-
թիւնը ա՛լ աւելի ծաղկեցաւ շնորհիւ Եւթիմիոսի աշակերտաց
եռանդագին ջանքերուն:

Նոյն աշակերտներուն մէջ մեծ տեղ մը կը զբաւէին Հայերը:
Եւթիմիոսի անունը սիրելի էր Մելիտինեցի հայերուն. անոր հո-
գեւոր գործունէութեան արդիւնքները առաջին սնգամ տեմնուե-
ցան հայկազն Ս. Պողիկտոսի դամբարանին շուրջը. ան հո՛ն ըս-
տացած էր Աստուծոյ հոգիին ներշնչումը. հայ նահատակին զե-
րեզմանէն արձագանգող ձայնը ծնունդ տուած էր այդ Մեծ
Անապատականին, որուն անունը երկար ժամանակ պաշտումի
տեղ մը ունէր բոլոր Մելիտինեցիներուն սրտին մէջ: Անոր ու-
սուցիչներէն մին Սիդոնիոս հայ մ'էր, ուսեալ և բարձր իմա-
ցականութեան տէր, որ կարողացաւ երկար տարիներ վարել
Մելիտինէի ընծայարանը եւ եպիսկոպոսութիւնը: Ուսուցչին եւ